«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
19 նոյեմբերի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 նոյեմբերի 2005 թվականի N 1899-Ն

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել թունաքիմիկատների և պարարտանյութերի վաճառքի առանձնահատկությունները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2005 թ. նոյեմբերի 11
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2005 թվականի
նոյեմբերի 3-ի N 1899-Ն որոշման

ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործման համար թույլատրված և գրանցված թունաքիմիկատների (քիմիական և կենսաբանական պատրաստուկներ, որոնք օգտագործվում են բույսերի վնասատուների և հիվանդությունների, գյուղատնտեսական արտադրանքի վնասատուների դեմ պայքարի, բույսերի աճի կարգավորման համար), օրգանական և ոչ օրգանական պարարտանյութերի վաճառքի առանձնահատկությունները:
2. Վաճառքի սույն առանձնահատկությունները տարածվում են թունաքիմիկատների և պարարտանյութերի վաճառք իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վրա:
3. Հայաստանի Հանրապետության տարածքում վաճառքի ենթակա են միայն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված և օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկում ընդգրկված թունաքիմիկատները:

Թունաքիմիկատների վաճառք իրականացնող խանութներում՝ գնորդներին (սպառողներին) տեսանելի տեղում փակցվում է նշված անվանացանկը:

4. Թունաքիմիկատների և պարարտանյութերի (այսուհետ՝ ապրանքներ) վաճառքը խանութներում արտադրողի և մասնագիտացված կազմակերպության, այդ թվում՝ վաճառողի կողմից իրականացվում է միայն կշռափաթեթավորված:
5. Աշխատողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սպառողին, նրա պահանջով, տրամադրել ապրանքի վերաբերյալ անհրաժեշտ

տեղեկատվություն:

6. Վաճառողն ապահովում է աշխատողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանքային անվտանգության պայմանները:

7. Վաճառողը պետք է ապահովի՝

ա) տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ ապրանքների վաճառքի, խանութում տեղավորելու և պահելու անվտանգության պարտադիր պահանջները.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ թունաքիմիկատների և պարարտանյութերի վաճառքին ներկայացվող անվտանգության հիգիենիկ պահանջները:

8. Ապրանքները մինչև վաճառքի հանելը պետք է անցնեն նախավաճառքային նախապատրաստություն, որը ներառում է ապրանքի փաթեթների բացումը և փաթեթավորման որակի ստուգումը, տեսակավորումը, անհրաժեշտ տեղեկատվության առկայությունը և գների ճշտությունը:

9. Կշռափաթեթավորված ապրանքները վաճառվելիս պետք է ունենան պիտակներ, որոնց վրա նշվում են ապրանքի անվանումը, արտադրող ու մասնագիտացված կազմակերպությունների և վաճառողի անվանումները, մաքուր քաշը կամ ծավալը, գինը, ազդող նյութի խտությունը, վտանգավորության դասը, արտադրման ամսաթիվը, պիտանիության ժամկետը և թունավորման ժամանակ առաջին բուժօգնության մասին տեղեկություններ:

10. Ապրանքների վաճառքի ժամանակ սպառողին, բացի օրենքով սահմանված պարտադիր տեղեկատվությունից, պետք է տրամադրվի մշակվող օբյեկտի, ծախսի նորմայի, կիրառման ժամկետի, եղանակի, մշակումների առավելագույն թվի և աշխատանքի անվտանգության միջոցառումների մասին տեղեկատվություն, առանց որի ապրանքի օգտագործումն ըստ նշանակության հնարավոր չէ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**